



Հայտարարություն մրցույթի մասին

Մրցույթի համարը 02/21

Պատվիրատուն՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գորիս, Գր.

Տաթևացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի Սպանդարյան ՀԷԿ-ի սեփական կարիքների համար կոմպլեկտ բաշխիչ սարքավորումների մատակարարման և տեղադրման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Մատակարարումն և աշխատանքների կատարումն անհրաժեշտ է իրականացնել պայմանագրի երկկողմանի կնքման պահից 160 օրացուցային օրվա ընթացքում: Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «ՔոնթուրԳլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների /կապալառուների եւ երրորդ կողմի աշխատանքներ/ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տեխնիկական առաջարկ, Մասնագիտական փորձառություն, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, Տեխնիկական միջոցներ**: Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն մրցույթի հայտերի (տեխնիկական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ Էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով, փաստաթղթային ձևով **մինչև 2021թ. մարտի 9-ը, ժամը 10:00**, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն կամ անգլերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեում, **2021թ. մարտի 9-ին ժամը 10:30-ին**: Մասնակիցների **Տեխնիկական փորձի, Անձնակազմի, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի, տեխնիկական միջոցների** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար մասնակիցները հայտով (տեխնիկական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

CONTOURGLOBAL®

Հիդրո կասկադ



Գնումները իրականացվում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273Ա որոշմամբ և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն, որը կարող եք գտնել սույն հղումով.

<https://eservices.contourglobal.eu/armenia/>

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանին:

Հեռախոս՝ 0284 50022

Էլ. փոստ arevik.nikolayan@contourglobal.com

Պատվիրատու՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Սպանդարյան ՀԷԿ-ի սեփական կարիքների
համար կոմպլեկտ բաշխիչ սարքավորումների մատակարարման և տեղադրման
աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի**

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ **Սպանդարյան ՀԷԿ-ի սեփական կարիքների համար կոմպլեկտ բախշիչ սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների** ձեռքբերման նպատակով 02/21 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ընթացակարգի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273Ա որոշմամբ և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arevik.nikolayan@contourglobal.com

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Սպանդարյան ՀԷԿ-ի կարիքների համար կոմպլեկտ բաշխիչ սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների ձեռքբերումը:

համարը	աշխատանքի անվանումը
1	Սպանդարյան ՀԷԿ-ի կարիքների համար կոմպլեկտ բաշխիչ սարքավորումների մատակարարում և տեղադրում

Սպանդարյան ՀԷԿ-ի կարիքների համար կոմպլեկտ բաշխիչ սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի

ՄԱՍ 2:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ կամ առկա է սնանկության վտանգի վարույթ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են «ՔոնյուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի և ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1 Մասնակցի կողմից ներկայացվելիք որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ցանկը

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) Տեխնիկական առաջարկ
- 2) Մասնագիտական փորձառություն
- 3) ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն
- 4) Աշխատանքային ռեսուրսներ
- 5) Տեխնիկական միջոցներ
- 6) Լիցենզիա
- 7) Երրորդ կողմի համապատասխանության հաստատման թերթիկ (կցվում է)
- 8) ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրից քաղվածք, ոչ ավել քան 5 օրվա

վաղեմության հայտի ներկայացման պահի դրությամբ:

9) Հայտարարություն հրավերով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստի լինելու վերաբերյալ/կցվում է/:

10) Հայտարարություն գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:

3.2 Տեխնիկական առաջարկի գնահատման չափանիշները

1. Տեխնիկական առաջարկ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով,

1.1 Մրցույթին մասնակցող ընկերությունները գնահատվելու են ըստ հետևյալ չափորոշիչների՝

Տեխնիկական առաջարկ – 70%

Ֆինանսական առաջարկ – 30%

Տեխնիկական գնահատումը կիրականացվի ըստ հետևյալ չափորոշիչների և առավելագույն միավորների

Տեխնիկական գնահատումը կիրականացվի ըստ հետևյալ չափորոշիչների և առավելագույն միավորների		Միավորներ	
1	Ծրագիր և մեթոդներ		50
1.1	Առաջարկի հստակություն և ամբողջականություն	5	
1.2	Աշխատանքների կատարման տեխնիկական առաջարկ	10	
1.3	Առաջարկվող տեխնիկական առաջադրանքի վերլուծություն, դիտողություններ, առաջարկներ	15	
1.4	Աշխատանքների կատարման օրացուցային պլան, մանրամասն նկարագրություններով և առաջադրանքների կատարողներով	10	

1.5	Աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող սարքավորումներ	10	
2.	Մասնակից կազմակերպության փորձառությունը		50
2.1	Նմանատիպ աշխատանքների փորձառություն	35	
2.2	Մասնակից կազմակերպության տվյալ աշխատանքներում ներգրավված առանցքային անձնակազմի պահանջվող չափանիշներին համապատասխան մասնագիտական որակաորում	15	
Ընդհանուր առավելագույն			100

Տեխնիկական գնահատումից հետո բացվում են մասնակից կազմակերպությունների ֆինանսական առաջարկներով փակ ծրարները այն դեպքում, երբ տվյալ մասնակից կազմակերպության տեխնիկական գնահատման արդյունքը կազմել է 60 և ավել միավոր: Վերջնական գնահատումը կատարվում է հետևյալ սկզբունքով

$P_T = 70 * T / T_0$ որտեղ՝

P_T - տեխնիկական առաջարկի միավորն է,

T - մասնակցի հավաքած միավորները,

T_0 - առավելագույն միավորներ հավաքած մասնակցի միավորները:

Մասնակից կազմակերպությունների ֆինանսական առաջարկը գնահատվում է հետևյալ սկզբունքով՝

$P_F = 30 * C_0 / C$, որտեղ՝

P_F – ֆինանսական առաջարկի միավորն է

C_0 – կազմակերպությունների կողմից առավելագույն ցածր գնային առաջարկը

C – մասնակից կազմակերպության առաջարկած գինը:

Ընդհանուր միավորները կհաշվարկվեն հետևյալ կերպ՝

$P = P_T + P_F$

Մրցույթում մասնակցող ընկերությունները մրցույթի նախագիծը կարող են ստանալ էլեկտրոնային տեսքով:

2. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

2.1 «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «35» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները: Կապալառուից պահանջվում է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր այն մասին որ վերջին 2 տարում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ 50 մլն. ՀՀ դրամից, որից

առնավազը 1 պայմանագրի շրջանակներում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ 20 մլն. ՀՀ դրամից: Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճեններ (պայմանագիր, կատարողական ակտեր, հանձնման և ընդունման ակտ):

3. «Ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

3.1 Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Անհրաժեշտ է կից ներկայացնել նախորդ տարվա հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: (տեղեկանք Պետական եկամուտների կոմիտե-ից):

4. Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

4.1 «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «15» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները: Մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված աշխատողների կենսագրական տվյալները, անձնագրերի պատճենները, աշխատանքային պայմանագրերի պատճենները կամ համաձայնագիր տվյալ աշխատանքներին մասնակցելու համաձայնության մասին:

5. Տեխնիկական միջոցներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

5.1 Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն անհրաժեշտ Տեխնիկական միջոցների առկայության մասին, կից ներկայացնելով այն հավաստող փաստաթղթերը:

6. Աշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել տեխնիկական բնութագրի 8.4.1 կետով սահմանված լիցենզիաները:

Նշված աշխատանքները դասվում են Կապալառուների Աշխատանքի Պաշտպանության Տեխանվտանգության և Շրջակա միջավայրի պահպանման կառավարման ընթացակարգի Ա դասի ռիսկայնությանը: Հաղթող ընկերությունը մինչև պայմանագրի կնքումը 10 օրյա ժամկետում պարտավոր է ներկայացնել նշված ձևաթղթերը հիմնավորող (ընթացակարգեր, քաղաքականություններ, հրահանգներ, գրանցամատյան և այլն): Չապահովվելու դեպքում պայմանագիր չի կնքվում և հաղթողի իրավունքը փոխանցվում է երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

4. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում տեխնիկական և գնային առաջարկ՝ առանձին փակ ծրարներով: Գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել առանց ԱԱՀ:

Մրցույթի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

4.2 Մրցույթի հայտ անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մինչև 2021թ. մարտի 9-ը, ժամը՝ «10:00»-ն, ք. Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների գծով մասնագետ Ա. Նիկողայանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

5. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2021թ. մարտի 9-ը, ժամը՝ «10:30»-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

5.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին: Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Հայտը մերժվելու դեպքում մասնակցին ուղարկվում է էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվում է հայտի մերժման հիմքերը: Հայտի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ դրա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը մեկ անգամ թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և գնահատելուց հետո բացվում են մասնակից կազմակերպությունների կողմից ֆինանսական առաջարկներով փակ ծրարները այն դեպքում, երբ տվյալ մասնակից կազմակերպության տեխնիկական գնահատման արդյունքը կազմել է 60 և ավել միավոր: Մրցույթին մասնակցող ընկերությունները գնահատվելու են տեխնիկական բնութագրի 3.1.1 կետով սահմանված չափորոշիչներով, այն է՝

1. Տեխնիկական առաջարկ – 70%

2. Ֆինանսական առաջարկ – 30%

Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող աշխատանքների գնման հայտով սահմանված չափը, ապա՝

- ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը: Յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:
- Հայտերը վերջնական գնահատելուց հետո գնահատող հանձնաժողովը հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, կազմվում է արձանագրություն:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Պայմանագրին/Գնման պատվերին/:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1 Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր «ՔոնյուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում: Նախքան պայմանագիր կնքելը հաղթող մասնակցին կառաջարկվի ծանոթանալ և հաստատել հակակոռուպցիոն փաստաթղթերը: Ընկերությունը կարող է հրաժարվել Պայմանագիր կնքել հաղթող Ընկերության հետ, եթե վերջինս չհամապատասխանի Ընկերության գործող ընթացակարգերին, որի մասին Հաղթողը կստանա պատճառաբանված մերժում:

7. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Մասնակցի առաջարկը, դրան վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

7.2 Սույն հրահանգի 7.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են

- ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.
- գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
- դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

7.3 Սույն հրահանգի 7.1 և 7.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

8. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

8.1 Գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

Աշխատանքների կատարման Պայմանագիր №	Contract of Works №
Սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքվել է ք. _____-ում, 2021թ.-ի ____/____/____-ին հետևյալ կողմերի միջև՝	This Contract (hereinafter referred to as the “Contract”) is executed in _____, on ____/____/____, 2021 by and between
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, ի դեմս ընկերության տնօրեն Արա Հովսեփյանի, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և	“ContourGlobal Hydro Cascade” CJSC, represented by Ara Hovsepyan in his capacity of Director, acting on the authorities given to him by the Company Charter, hereinafter referred to as Client, and
«_____» ՍՊԸ, ի դեմս տնօրեն _____, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.	“_____” LLC, represented by _____, in his capacity of Director, acting on the authorities given him by the Company Charter, hereinafter referred to as Contractor, this contract was signed for the following:
Սահմանումներ	Definitions
<p>Աշխատանք՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 1.1 կետում.</p> <p>Տեխնիկական բնութագիր՝ Աշխատանքի կատարմանը Պատվիրատուի կողմից ներկայացվող և պարտադրվող տեխնիկական պահանջներ և պայմաններ, որոնք սահմանված են Հավելված 2-ում.</p> <p>Նախահաշիվ՝ Աշխատանքի մանրամասն ֆինանսական բացվածք նկարագրված Հավելված 3-ում</p> <p>Գաղտնի Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)՝ անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում այդ</p>	<p>Work – as defined in Clause 1.1 of this Contract.</p> <p>Technical Specification – technical requirements and conditions submitted and mandated by the Client for performance of the Work defined in Annex 2;</p> <p>Bill of Quantity – detailed price breakdown of the Work defined in Annex 3</p> <p>Confidential Information (trade secret) - regardless of the form any technical, financial, organizational, commercial and any other information concerning the Client and its activity which is unknown to third persons and by virtue of its being unknown has an actual or potential commercial value and the Client takes measures for the defense of its confidentiality.</p>

<p>տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:</p> <p>Փոխկապակցված անձ նշանակում է ցանկացած անձ, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեկ կամ մի քանի ածանցյալ անձանց միջոցով վերահսկում է, վերահսկվում է կամ գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ այդ անձի հետ: «Վերահսկում» տերմինը (ներառյալ «վերահսկող», «վերահսկվող» և «ընդհանուր վերահսկողության տակ» տերմինները) նշանակում է՝ ուղղակի կամ անուղղակի իշխանություն ունենալ անձի կառավարման և քաղաքականության ուղղության նկատմամբ քվեարկող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու, պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ: Այս սահմանման նպատակներով Ընկերության դուստր ձեռնարկությունը նշանակում է միայն ContourGlobal plc և ցանկացած դուստր ձեռնարկություն:</p> <p>Երաշխիքային ժամկետ - ժամկետ, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է Աշխատանքի հետ կապված Թերություններ ի հայտ գալու դեպքում վերացնել դրանք՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով.</p> <p>Թերություններ՝ Աշխատանքի թերություն և/կամ անհամապատասխանություն(ներ) սույն Պայմանագրով սահմանված Օգտագործման Նպատակին և/կամ սույն Պայմանագրին և/կամ կիրառվող օրենսդրության պահանջներին և/կամ սովորաբար այդպիսի Աշխատանքներին ներկայացվող պահանջներին և/կամ սույն Պայմանագրի Հավելված 2-ում ներկայացված Աշխատանքի բնութագրին և տեխնիկական պահանջներին:</p>	<p>“Affiliate” of any person means any other person that, directly or indirectly through one or more intermediaries, controls, is controlled by or is under common control with that person. The term “control” (including the terms “controlling,” “controlled by” and “under common control with”) means the possession, direct or indirect, of the power to direct or cause the direction of the management and policies of a person, whether through the ownership of voting securities, by contract or otherwise. For purposes of this definition, Affiliate of the Client means only ContourGlobal plc and any subsidiaries.</p> <p>Warranty Period- the period of time during which in case Deficiencies arise in regard with the Works, the Contractor shall eliminate such Deficiencies as set forth by the present Contract.</p> <p>Deficiencies - any default and/or defect and/or malfunctioning and/or non-compliance(s) of the Works to the Purpose defined by this Contract and/or to applicable legislation requirements and/or to requirements which are usually presented to such Works and/or to the technical characteristics and technical requirements, as defined in Annex 2 of this Agreement .</p>
<p>1. Պայմանագրի Առարկան</p>	<p>1. Subject of the Contract</p>
<p>1.1 Սույն պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագրի) Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կապալառուին համաձայնում է կատարել</p>	<p>1.1 Under the provisions of the present contract (the Contract) the Client assigns and the Contractor accepts to perform</p>

աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք) սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ում և Հավելված 3-ում ներկայացված տեխնիկական բնութագրի և նախահաշվի հիման վրա, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքը և վճարել համաձայն Պայմանագրի:	<div></div> (the Work) based on terms of Technical Specification and Bill of Quantity appended to this Contract as Annex 2 and Annex 3, which are an integral part hereof, and the Client shall accept the Work and pay for the Work as per this Contract.
2. Կապալառուի երաշխավորությունները	2. Contractor's representations and warranties
2.1 Կապալառուն երաշխավորում է, որ ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և լիցենզիաները, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ:	2.1 The Contractor warrants that it has all permissions and licenses required by legislation of Armenia necessary for performance of the Work, defined in this Contract.
2.2 Կապալառուն երաշխավորում և պարտավորվում է Աշխատանքը կատարել ժամանակին, պատշաճ ձևով, բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության, Պատվիրատուի ցուցումների, պահանջների և արժեքների:	2.2 The Contractor warrants and undertakes to perform the Work in time, properly, with high quality and professional level, in accordance with this Contract, legislation of Armenia and the instructions and requirements of the Client.
2.3 Կապալառուն կրում է կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև Պատվիրատուի կողմից այն ընդունելը:	2.3 The Contractor bears the risk of the risk of accidental loss or injury of work result until the acceptance by the Client.
3. Տարածք Մուտք	3. Access to Site
3.1 Պատվիրատուն պարտավոր է տրամադրել Կապալառուին և նրա աշխատակիցներին բոլոր անհրաժեշտ լիազորությունները ապահովելու համար իրենց մուտքը Պատվիրատուի տարածք: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին առնվազն 24 ժամ առաջ տեղյակ պահել նման մուտքի անհրաժեշտության մասին:	3.1 The Client shall provide all necessary authorizations to the Contractor and its Employees to ensure their access to the Client site. The Contractor shall inform the Client about the necessity of such access at least 24 hours before.
3.2 Կապալառուն պարտավոր է տրամադրել այն աշխատակիցների ցանկը, որոնք պետք է մուտք գործեն շինարարության տարածք Պայմանագրի գործողության ողջ տարածքում:	3.2 The Contractor shall provide the list of its Employees which shall have access to the construction site during the whole duration of this Contract.

4. Գինը և Վճարումը	4. Price and Payment
4.1 Աշխատանքի համար Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է XXX,XXX () ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:	4.1 The total price of the Contract for the Work constitutes AMD XXX,XXX () VAT excluded.
4.2 Կապալառուի գնային առաջարկում ներառված, Հավելված 3-ում ներկայացված միավորի գները գործում են սույն պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և ենթակա չեն փոփոխության:	4.2 The unit prices fixed in Annex 3 are valid for the whole term of this Contract and are not subject to change.
- 4.3 Աշխատանքի համար վճարումը կատարվում է հաշիվ-ապրանքագիրը և Վերջնական Ընդունման-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:	4.3 The payment for the Work shall be done within 30 /thirty/ days from the date of the bilateral signature of the invoice, and Final Acceptance Protocol.
4.4 Բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով:	4.4 All payments shall be made via bank transfers in AMD.
4.5 Աշխատանքի Հավելված 2-ում նախատեսված ծավալից մինչև 20 տոկոսի չափով ավելացման անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել Պայմանագիրը:	4.5 In case of volume increase of Work provided in the Annex 2 not more than 20% the Parties must execute a VO and amendment of the Contract.
5. Աշխատանքի Կատարումը	5. Work Performance
5.1 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին, Հավելված 2-ին, 3-ին և 4-ին, Աշխատանքի կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին և ցուցումներին, ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի կատարմանը ներկայացվող նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան:	5.1 The Contractor shall perform the Work in accordance with this Contract, Annex 2, 3 and 4 the requirements and instructions presented by the Client during the Work performance, the legislation of Armenia and the norms, rules and standards generally and absolutely presented for performance of such Work.
5.2 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ:	5.2 The Contractor shall perform the Work personally.
5.2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:	5.2.1 The Work is carried out by the Contractor's means, materials and funds.

<p>5.2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:</p>	<p>5.2.2 Contractor shall be responsible for the quality of the materials and equipment provided.</p>
<p>5.3 Կապալառուն չի կարող, առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, զիջել կամ փոխանցել սույն Պայմանագիրը կամ սույն Պայմանագրով նախատեսված որևէ իրավունք (ներառյալ, առանց սահմանափակումների, փոխհատուցման իրավունքը) և ցանկացած նման պայմանագիր կամ համաձայնություն, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար:</p>	<p>5.3 Contractor may not, without Client's prior written consent, assign, transfer or hypothecate this Agreement or any interest in this Agreement (including, without limitation, any right to the payment of any compensation payable pursuant to this Agreement), and no purported assignment, transfer or hypothecation will be effective or enforceable, as against Client.</p>
<p>5.4 Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության Կապալառուն իրավունք չունի կնքել որևէ պայմանագիր որևէ ենթակապալառուի հետ, ներառյալ ցանկացած գործակալության, խորհրդատվության կամ ներկայացուցչական պայմանագիր կնքելու միջոցով, և ցանկացած նման պայմանագիր, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար: Բոլոր հաստատված ենթակապալառության պայմանագրերը պետք է պարունակեն սույն գլխի դրույթները:</p>	<p>5.4 Contractor may not subcontract for any of the Services to be provided pursuant to this Agreement, including by way of any agency, consulting, or other representative agreement, without Client's prior written consent, and any purported subcontracting to which Client has not so consented will not be effective or enforceable as against Client. All approved subcontracts shall contain provisions substantially identical to those contained in this Agreement.</p>
<p>5.5 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս պահպանել շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության կանոնները և այլ պարտադիր պահանջներն ու նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Պատվիրատուի կողմից սահմանված Աշխատանքի և Անվտանգության ապահովման պահանջներով (Հավելված 4): Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Աշխատանքի կատարման ժամանակ կամ դրա հետ կապված Կապալառուի աշխատողներին և/կամ երրորդ անձանց և/կամ Կապալառուի և/կամ երրորդ անձանց գույքին պատճառված վնասի համար:</p>	<p>5.5 The Contractor shall comply to all environmental, health and work safety and other mandatory requirements and norms provided by the legislation of Armenia and Health and Safety Policy set by the Contractor (Annex 4) when performing the Work. The Client shall not be responsible for the damages caused to Contractor's employees and/or third persons and/or the property of third persons during performance of the Work or related to it. The Contractor shall inform immediately the Client for each occurred incident which has negative effect on the environment or breaches the health and</p>

<p>Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող կամ առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները խախտող յուրաքանչյուր պատահարի մասին, ինչպես նաև վերջինիս ներկայացնել գրավոր զեկույց նման պատահարների վերաբերյալ, պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր հետո:</p>	<p>safety requirement as well as shall submit a written report to Client for such incident not later that one business day as from its occurrence.</p>
<p>5.6 Կապալառուն պարտավոր է մինչև Աշխատանքը սկսելը առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ տեղեկացնել Պատվիրատուին Աշխատանքը սկսելու մասին և Պատվիրատուին ներկայացնել Աշխատանքը կատարելու հստակ և մանրամասն ժամանակացույց:</p>	<p>5.6 The Contractor shall inform the Client at least 48 (forty eight) hours prior to start of the Work and provide a clear and detailed schedule of Work.</p>
<p>5.7 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարելիս Կապալառուն և Կապալառուի աշխատակիցները ներկայացնում են Պատվիրատուին և հետևաբար պետք է գործեն բարձր պրոֆեսիոնալ կերպով, Պատվիրատուի շահերից ելնելով, բարեխղճորեն և ողջամտորեն:</p>	<p>5.7 When performing the Work defined in this Contract, the Contractor and the Contractor's Employees represent the Client, thus they shall act in highly professional way, for the interests of the Client, in good faith and reasonably.</p>
<p>5.8 Աշխատանքը կատարելիս Կապալառուն պարտավորվում է գործի դնել նման կապալառուի ամբողջ ողջամիտ ուշադրությունը և հմտությունները՝ նման Աշխատանքի կատարման համար ընդունված ընդհանուր ստանդարտներին համապատասխան:</p>	<p>5.8 When performing the Work the Contractor shall use all reasonable care and skills of the Contractor of such Work in accordance with the generally accepted standards for performance of such Work.</p>
<p>5.9 Ենթադրվում է, որ Կապալառուն ունի ամբողջական պատկերացում իրականացվող Աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ և ունի Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային և այլ պարագաներ, որոնք սահմանված են սույն Պայմանագրում կամ որոնց այլ կերպ հղում է արվում կամ որոնք այլ կերպ անհրաժեշտ են նման Աշխատանքների կատարման համար:</p>	<p>5.9 The Contractor shall be deemed to have full knowledge of the extent and nature of the Work and to be allowed for all items of work shown upon, described by or referred to in this Contract or which are otherwise necessary to perform such Works.</p>

5.10 Սույն Պայմանագրի 5.1-5.10 կետերի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի դադարեցման:	5.10 Non-fulfilment of the requirements mentioned in Clauses 5.1-5.10 shall be a ground for unilateral termination of the Contract by Client.
6. Աշխատանքի Ընդունումը	6. Acceptance of the Work
6.1 Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը Աշխատանքի կատարման ընթացքում առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:	6.1 The Client shall be entitled to check the process and the quality of the Work during performance by the Contractor at its discretion without interfering Contractor's activity. Should deficiencies be discovered as a result of such inspection, the Client shall immediately inform the Contractor.
6.2 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Աշխատանքը ընդունելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար:	6.2 The Client shall be entitled to refuse acceptance of Work and to request reimbursement of the damages caused thereby, if the Contractor does not start performance of the Work on time or performs the Work so slowly that its termination on time becomes impossible.
6.3 Պատվիրատուի կողմից Աշխատանքի ստուգման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է վերացնել հայտնաբերված թերությունները և համապատասխանեցնել Աշխատանքը Պատվիրատուի պահանջներին 5 (հինգ) օրվա ընթացքում:	6.3 In case deficiencies are discovered by the Client during checking of the Work, the Contractor shall eliminate the discovered deficiencies and comply the Work with the requirements of the Client within 5 (five) days.
6.4 Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազմվում է Թերությունների Ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման	6.4 In case of revealed deficiencies, a Deficiency Protocol shall be executed with the Contractor defining that the Work has been accepted with reserves. Such Protocol shall be deemed as a deficiency act, where should be defined the deficiencies discovered in the Work result and the terms for their elimination if the Client requests elimination of the deficiencies.

<p>Ժամկետները, եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում:</p>	
<p>6.5 Թերությունների վերացումից հետո Վերջնական Ընդունման-հանձնման Ակտը հաստատվում և երկկողմանի ստորագրվում է Կողմերի կողմից հաստատելով Աշխատանքի ընդունումը:</p>	<p>6.5 After elimination of all deficiencies, Final Acceptance Protocol shall be approved and bilaterally signed by the Parties certifying the acceptance of Work.</p>
<p>7. Թերությունների Վերացումը</p>	<p>7. Elimination of Deficiencies</p>
<p>7.1 Գործող օրենսդրության և/կամ սույն Պայմանագրի խախտմամբ Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կամ ոչ ամբողջական կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի 5 (հինգ) օրը անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները: Աշխատանքի պատշաճ կատարման համար Կապալառուին տրամադրված վերոնշյալ ժամկետը վերջինիս չի ազատում սույն Պայմանագրով սահմանված տույժերը վճարելու իր պարտավորությունից: Եթե վերոնշյալ ժամկետում Կապալառուին չի հաջողվում նորից պատշաճ կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի մեջ հայտնաբերված թերությունները կամ չի հաջողվում վերացնել դրանք ամբողջությամբ կամ եթե դրանք էական կամ չվերացող են, Պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ իրավասու է՝</p>	<p>7.1 In case the Work is performed with breach of the applicable legislation and/or this Contract or with deficiencies or partially, which have made the Work result unsuitable for use, the Contractor shall perform the Work again or eliminate the deficiencies of the Work performed free of charge, within the term, agreed between the Parties, which in no case shall exceed 5 (five) days. The mentioned term provided to the Contractor for proper performance of the Work, does not release the Contractor from the liability to pay the penalties, provided in this Contract. Should the Contractor within the mentioned term again fail to eliminate the deficiencies revealed or if such deficiencies are essential and cannot be eliminated, the Client shall be entitled, at its sole discretion, to:</p>

<p>7.1.1 Կապալառուից պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:</p>	<p>7.1.1 request the Contractor to perform the Work in accordance with this Contract within the reasonable term, defined by the Client and to pay a penalty in the amount of 0.1% of the total price for each delayed day, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.</p>
<p>7.1.2 հրաժարվել չկատարված Աշխատանքի ընդունումից և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:</p>	<p>7.1.2 refuse acceptance of the non-performed Work and request to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.</p>
<p>7.1.3 պահանջել համաչափ նվազեցնելու Աշխատանքի համար սահմանված գինը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:</p>	<p>7.1.3 to request to reduce proportionally the price defined for the Work and to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.</p>
<p>7.1.4 պահանջել հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:</p>	<p>7.1.4 request to reimburse the expenses incurred by the Client to eliminate the deficiencies and to pay a penalty in the amount of AMD 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused, in accordance with this Contract and the applicable legislation.</p>
Սխեմայում նախատեսված է պահեստի ավտոմատ միացման սարք, որը հինական լարման բացակայության դեպքում ավտոմատ միացնում է պահեստի կամ վթարային սնումը, իսկ հիմնական լարման վերականգնման դեպքում անցում է կատարում հիմնական սնման աղբյուրին: Նմանատիպ սխեմա իրականացվում է նաև երկրորդ ագրեգատի սեփական կարիքների համար: Սեփական կարիքների սխեման ավելի հուսալի դարձնելու համար անհրաժեշտ է կապ ստեղծել համար առաջին և համար երկրորդ ագրեգատների սեփական կարիքների բաշխիչ սարքավորումների միջև, տեղադրելով առանձին վահան ՀՕԱ-ով: Անջատիչը պետք է լինի եռաբևեռ, հզորությունը $U_n=0.4\text{կՎ}$, 50Հգ , $I_n=1000\text{Ա}$, նոմինալ անջատման հնարավորությունը $I_{cu}\geq 20\text{կԱ}$: Անջատիչը պետք է լինի շարժակազմով Հոսանքի Օդային Անջատիչ (ACB/ՀՕԱ) որն ունի միացման, ստուգման և անջատման դիրքեր: (գծ 1)- ում Գծված է կապույտ գույնով:

3.1.1 Ընդհանուր պահանջներ

“Կոմպլեկտ բաշխիչ սարքավորման”

-Կադապարը պետք է լինի մետաղական, անկախ, ստանդարտ բարձրության:

- Կադապարը պետք է լինի կոշտ մետաղից, որն ունի առնվազն

3.1 The scheme, requirements to the auxiliary switchgear of Spandaryan HPP

The scheme of the switchgear (Fig. 1) consists of two sections connected to each other by an interconnecting circuit breaker.

The feeding of one of the sections is carried out from an external 35/6 kV transformer substation, feeding general station TC3-630/6/0.4 power transformer through 6 kV cable line. 0.4 kV voltage is connected to the general station section of the switchgear through input switch. The other section is fed from unit N 1 auxiliary TC3-630/10/0.4 power transformer through an input switch.

The emergency diesel generator is also connected to the general station section through a circuit breaker. Marked in red in Fig. 1.


The scheme provides automatic storage connection device, which automatically switches the backup or emergency power supply in the absence of principal voltage and in the event of principal voltage recovery switches to the main source of supply.

A similar scheme is also implemented for the auxiliaries of Unit N 2. In order to make the auxiliaries scheme more reliable, it is necessary to establish a connection between auxiliary switchgears of Units N 1 and N 2 by installation a separate panel with air circuit breaker. The ACB should be 3 pole, rated: $U_n=0.4\text{kV}$, 50Hz , $I_n=1000\text{Amp.}$, rated breaking capacity $I_{cu}\geq 20\text{kA}$. The switch should be of drawout-type circuit breaker (ACB) with connected, test and disconnected positions. It is marked in blue in Fig. 1.

3.1.1. General requirements to switchgear

- Encloser of the switchgear, should be metal clad, standalone and of standard height.

- Enclosures shall be mild steel sheet having minimum thickness of 2 mm;

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet Էջ 4 14

2մմ հաստություն:


- Բաշխիչ սարքավորումը պետք է բաժանված լինի ֆունկցիոնալ խցիկների.
- Հավաքական և բաշխիչ հաղորդադրողների:
- Ֆունկցիոնալ:
- Մալուխների միացման:
- Ընդհանուր հաղորդադրողների:
- Էլեկտրաէներգիայի հաշվիչների
- Խցերի միջև բաժանումները պետք է ապահովեն -IP20 (ГОСТ-14254) պաշտպանվածության աստիճան:
- Բոլոր հիմնական անջատիչներն ու սնուցիչները պետք է լինեն նույն մակնիշի:
- Բաղադրիչի առանձնացումը պետք է լինի՝ ըստ IEC61439-2-ի, որը պետք է ապահովի հաղորդիչ ձողերի առանձնացումը ֆունկցիոնալ միավորից, ինչպես նաև ֆունկցիոնալ մասերի միջև առանձնացումը: Արտաքին մալուխների ընդհանուր խցիկը պետք է առանձնացված լինի հաղորդաձողերից և ֆունկցիոնալ մասերից:
- Անջատիչների վահանակը ամբողջությամբ պետք է պաշտպանված լինի, ոչ պակաս, քան IP54 ըստ IEC 61439-1-ի և 2-ի:
- Կոմպլեկտ բաշխիչ սարքավորման կադավարը պետք է ունենա օդափոխման անցքեր՝ զտիչով, որը պետք է ապահովի ջերմության ցրման գործընթացը:
- Կադավարը պետք է փոշեներկված լինի բաց մոխրագույն գույնով:
- Մալուխների մուտքը պետք է լինի ներքևի մասից և ուղիղ դեպի մալուխների բաժանմունք:
- Կադավարի բոլոր շարժական մասերի համար պետք է ապահովել հողանցում:
- Բաշխիչ սարքավորումը պետք է ունենա երկողմանի սպասարկման հնարավորություն:
- Բոլոր ներքին լարանցումները և տեղադրված բաղադրիչները պետք է նշագրված լինեն ըստ լարանցման սխեմայի և վահանակի գծագրի:
- Եթե այլ կերպ չի նախատեսված, բոլոր չափիչ սարքավորումները և գործիքները պետք է տեղադրվեն լրացուցիչ բաժանմունքների դիմային վահանակի վրա:
- Բաշխիչ սարքավորման էլեմենտների ղեկավարման ավտոմատացված համակարգ (ACY TPI)
- Ղեկավարումը օպերատիվ հաստատուն հոսանքով 24Վ, 220Վ:
- Բոլոր խցերի բաղադրիչների հավելյալ լարումը պետք է լինի 220Վ փոփոխական հոսանք:
- Բոլոր խցերը պետք է կահավորված լինեն ավտոմատ և ձեռքի կառավարման միացմամբ LED լուսավորությամբ:
- Բոլոր անջատիչները և խցերը պետք է կահավորված լինեն կողպեքավորման համակարգով (LOTO):
- Հիմնական մուտքային անջատիչի լրացուցիչ խցում պետք է տարածք թողնել հոսանքի չափիչ սարքի տեղադրման համար, որը նախապես միացված է տեղադրված հոսանքի լարման չափիչ տրանսֆորմատորին:
- Բոլոր նյութերը պետք է լինեն նոր: Օգտագործված, ինքնաշեն նյութերի և վերամշակված պարագաների օգտագործումն արգելված է:
- Արքեստ պարունակող նյութերի կիրառումը խստիվ արգելվում է:
- Գծ.2, 3, 4-ում պատկերված է գործող Կոմպլեկտ բաշխիչ սարքա-

Switchgear should be divided into functional compartments:

- collective and distribution busbars
- functional
- cable connection:
- general busbar
- electricity meters
- The separation between the compartments should ensure IP20 (GOST14254) protection degree.
- All, main incommer and feeders should be of same brand;
- Component segregation should according to IEC61439-2, which must ensure separation of the busbars from the functional units as well as separation between functional units. Common compartment for external cables must be separated from the busbars and the functional units;
- The entire switchboard must have a degree of protection not less than IP54 in accordance with IEC 61439-1 and 2;
- The switchgear enclosure, should have venting openings with filter elements, which must ensure proper heat dissipation;
- Enclosure, must be powder painted in light grey mild industrial color;
- Cable entry should be from the bottom, directly to the cable compartment;
- For all movable parts of the enclosure should be provided earthing connection;
- The switchgear should have a two-side service capability.
- All internal wiring and installed components should be print marked as per the wiring diagrams and drawings of the panel;
- Unless otherwise specified, all measuring gauges and apparatuses should be installed on the front panel of the auxiliary compartments.
- Automatic process control system for switchgear elements (ACY TPI)
- Control with operational DC of 24V, 220V
- Auxiliary voltage for all components of the cubicle should be 220VAC.
- All the cubicles should be equipped with LED lighting of automatic and manual control.
- All the switches and cubicles should be equipped with LOTO system.
- In the auxiliary compartment of main incommer, should be left space for installation of Power meter with pre-wired cables to the installed measuring CTs and reference voltage.

All materials should be new. The use of used, improvised materials and recycled materials is forbidden.

- The use of asbestos-containing materials is strictly forbidden.
- The operating switchgears shown in Figure 2, 3 and 4 should be replaced with new type of equipment and they should be similar to the equipment shown in Fig. 1 and 2.

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet Էջ 5 14

վորումները որոնք պետք է փոխարինվեն նոր տիպի սարքավորումներով, որոնք պետք է լինի նմանատիպ նկար 1-ում և նկար 2-ում պատկերված սարքավորումներին:

3.1.2. Մուտքային անջատիչ

- Վահանակի մուտքային անջատիչը պետք է լինի շարժակա-գնով Հոսանքի Օդային Անջատիչ (ACB/ՀՕԱ)՝ որն ունի միա-ցման, ստուգման և անջատման դիրքեր:
- ՀՕԱ-ն պետք է լինի եռաբևեռ, հզորությունը $Un=0.4\text{կՎ}, 50\text{Հգ}, In=1000\text{Ա.}$ նոմինալ անջատման հնարավորությունը $Icu \geq 20\text{կԱ}$ ։ Անջատման առավելագույն ժամանակահատվածը $<50\text{միլվրկ}$ ։ Փակման առավելագույն ժամանակահատվածը $<100\text{վրկ}$ ։
- Առնվազն պետք է ունենա գերբեռնվածության պաշտպանություն ($I>$), պաշտպանություն լարման բարձրացումից ($U>>$), պաշտպանություն լարման իջեցումից ($Un<$) ժամանակի հապաղումով և աղեղի կարգավորման հնարավորությամբ:
- Առջևի վահանակի վրա մուտքային անջատիչը պետք է ունենա «Միացման» և «Անջատման» կոճակներ, հիմնական կոնտակտների դիրքի ցուցիչ, զսպանակը լարելու բռնակ, էներգիայի պահեստավորման մեխանիզմի կարգավիճակի ցուցիչ, ցուցիչներ, որոնք ցույց են տալիս «միացված», «ստուգում» և «անջատված» դիրքերը, խաթարման/անջատման վերամիացման կոճակ, ֆունկցիոնալ պաշտպանության միավոր:
- Մուտքային անջատիչը պետք է ունենա գալարներ – « անջատման կոճեր», «խախտման կոճեր» և «ցածր լարման կոճեր»:
- Ներքին կոնտակտները և գալարները պետք է նախապես միացվեն տերմինալին, որպեսզի հետագայում միացվեն լրացուցիչ խրոցակներին:
- ՀՕԱ-ն պետք է անխափան (առանց սպասարկման) աշխատի առնվազն 10000 մեխանիկական բացման/փակման ցիկլ:

3.1.3. Սնուցող անջատիչներ:

- Անջատիչների վահանակում պետք է լինեն սնուցման անջատիչներ Կադպարով հոսանքի անջատիչներ/ԿՀԱ/ 3 բևեռներ, հզորությունը ըստ գծ.1-ի. $Un=0.4\text{կՎ}, 50\text{Հգ}$:
- ԿՀԱ-ները պետք է ունենան գերբեռնվածության և հոսանքի խափանման պաշտպանություններ:
- ԿՀԱ-ները պետք է ունենան կարճ միացման խախտման կարողություն ըստ գծ.1-ի:
- Սնուցման անջատիչները պետք է լինեն շարժակա-գնով Հոսանքի Օդային Անջատիչներ (ՀՕԱ)՝ որն ունի միացման, ստուգման և անջատման դիրքեր:
- Մեխանիկական դիմացկունությունը ≥ 20000 ցիկլ:

3.1.4. Հաղորդաձող

- Հաղորդաձողը պետք է լինի օդային մեկուսացմամբ, ամուր տիպի, ուղղանկյուն կտրվածքով պղնձյա:
- Հաղորդաձողերը պետք մոնտաժվեն ուղղահայաց կամ հորիզոնական:
- Ֆազայի և չեզոք հաղորդաձողերը պետք է տեղադրվեն միևնույն բաժանմունքում: Հաղորդաձողերի դիրքը, երբ նայում ես վահանակի դիմային մասից, պետք է լինի չեզոք -L1-L2-L3՝

3.1.2. Main incommer:


- Incommer of the switchboard should be drawout-type Air Circuit Breaker (ACB) with connected, test and disconnected positions;
- The ACB should be 3 pole, rated: $Un=0.4\text{kV}, 50\text{Hz}, In=1000\text{Amp.}$, rated breaking capacity $Icu \geq 20\text{kA}$. Maximum total breaking time $<50\text{ms}$. Maximum closing time $<100\text{ms}$.
- As a minimum should have overload protection ($I>$), overcurrent protection ($I>>$), Undervoltage protection ($Un<$) and possibility for pick-up time and trip curve adjustments.
- On its front panel the incommer breaker should have "ON" and "OFF" buttons, main contacts position indicator, handle for spring charging, energy storage mechanism status indicator, indicators for "connected", "test" and "disconnected" position, fault/trip reset button, functional protection unit;
- Incommer should be equipped with coils - "close release", "trip releas" and "under-voltage release";
- Internal contacts and coils should be pre-wired to terminals for further connection of auxiliary plugs.
- ACB should be maintenance free for at least 10000 mechanical open/closed cycles.

3.1.3. Feeders:

- In the switchboard, should be provided feed switches, Moulded Case Circuit Breakers type (MCCB), 3 poles, capacity as per figure 1, $Un=0.4\text{kV}, 50\text{Hz}$;
- MCCBs should have overload and fault current protections;
- MCCBs should have rated short circuit breaking capacity as per figure 1
- Feed switches should be of draw-out type installation, Air Circuit Breaker (ACB) with connected, test and disconnected positions;
- Rated mechanical durability ≥ 20000 cycles;

3.1.4. Busbar

- Busbar should be air isolated, solid type, rectangular in cross-section, copper ;
- The busbars should be mounted vertically or horizontally.
- The phase and neutral busbars shall be accommodated in the same compartments. The busbar orientation when viewed from the front of the board shall be neutral-L1-L2-L3 from left to right or from top to bottom

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet 6 14

տեղակայված ձախից աջ, կամ վերից վար:

- Յուրաքանչյուր ֆազա պետք է գունավորով ըստ հայկական կոդավորման և գունավորման ստանդարտների:
- Մուտքային հաշվարկված հոսանքը=1000Ա.
- Հաշվարկված հոսանքի դիմակայման կարճ ժամանակահատվածը ≥ 2041 -ի պետք է լինի 1 վարկյան:
- Հաղորդաձողը մեկուսացման նյութով մեկուսացնելու անհրաժեշտության դեպքում մեկուսիչ նյութը պետք է լինի հրակայուն:
- Հաղորդաձողերի սեկցիաների միացումները պետք է կատարվեն հեղուկով և մանեկով՝ օգտագործելով տափօղակներ: Հղկագողված, գողված, եռակցված և գամերով ամրացված միացումները չեն կիսառվում հաղորդաձողերի համար: Համընկումների երկարությունը ոչ մի դեպքում չպետք է լինի ավելի քիչ, քան ձողի լայնությունը:
- Հաղորդաձողի օժանդակող մեկուսիչները պետք է լինեն միևնույն տեսակի, ինչպիսիք կիրառվել են ստուգման ժամանակ, և մեկուսացումն էլ պետք է լինի նույն դասավորությամբ, ինչպիսին էր ստուգման ժամանակ: Ճենապակե մեկուսիչներ չպետք է կիսառվեն: Մեկուսիչները չպետք է ցեմենտով ամրացվեն, սակայն պետք է մեխանիկական ձևով անշարժացվեն՝ փոխարինման ժամանակ ապահովելով արագ փոխհամատեղելիություն:
- Վահանակում պետք է լինեն հողանցման առանձին սեղմա-կներ, որոնք պետք է մեկուսացված լինեն չեզոք հաղորդաձողից: Յուրաքանչյուր ելքային լար պետք է հնարավորություն ունենա միանալու հողանցման սեղմակներին:

3.1.5. Չափիչ սարքավորումներ:

- Մուտքային անջատիչի հավելյալ խցիկի դիմային դռան վրա պետք է տեղադրված լինեն երեք ամպերմետր և մեկ վոլտմետր՝ ֆազաների համար փոխարկման անջատիչով: Ամպերմետրն ու վոլտմետրը և հաշվիչները պետք է լինեն առնվազն 1.5 ճշտության դասի:
- Վահանակի վրա ամրացումը պետք է արվի մոնտաժային սեղմակներով:
- Ամպերմետրի և վոլտմետրի սանդղակի աշխատանքային տիրույթը պետք է լինի փոխարկիչի պարամետրերի 0-120%:
- Մուտքային մասում յուրաքանչյուր ֆազայի վրա պետք է տեղադրվի հոսանքի չափիչ տրանսֆորմատոր 1000/5Ա ճշտության 0.5 դասի՝ նախատեսված կոմերցիոն չափումների համար: Հոսանքի չափիչ տրանսֆորմատորների համար պետք է լինեն 6մմ^2 տեղադրված լարեր: Մուտքային անջատիչի օժանդակ խցիկում հոսանքի չափիչի համար հատկացվող տարածք:
- Հոսանքի տրանսֆորմատորները պետք է լինեն վակուումային կամ էպոքսիդի սոսնձով մեկուսացված սարքավորումներ: Բարդ համակցության և առաջնային կարգավորման փաթույթով հոսանքի տրանսֆորմատորները չեն ընդունվում:

- Each phase should be marked as per the armenian phase color coding:
- Rated current $I_n \geq 1000\text{Amps}$.

- Rated Short time withstand current $\geq 20\text{kA}$ for 1s.

- Busbar isolation materials should be flame raturdant:
- Jointing of sections of bus bars shall be by bolts & nuts complete with spring washers. Soldered, brazed, welded or riveted joints shall not be used in busbars. The length of overlap shall in no case be less than the width of the bar.
- Busbar support insulators shall be of the same type as those used in the type test and the installation shall be in the same arrangement as that in the type test. Porcelain insulators shall not be used. Insulators shall not be cemented into position but shall be mechanically fixed to ensure rapid interchangeability in the event of replacement.

- In the switchboard, should be provided separate PE bar, isolated from the Neutral busbar. Each outgoing cable should have possibility to be connected to the PE bar.

3.1.5. Measuring gauges:


- On the front door of incommer auxiliary compartment, should be installed three Ammeters and one Voltage meter with selector switch for the phases. Ammeters and Voltmeters should be as a minimum class 1.5 rated:
- Panel fixing should be by mounting clamps:
- Range of the ammeters and voltmer scale should be from 0 to 120% of the nominal parameters of the switchboard;
- At the incomming side, should be installed measuring CT on each phase rated 1000/5A and accuracy class 0.5 for commercial measurements. From the measuring CTs, should be pre-installed wires 6mm^2 . To the location of the space for the power meter in the incommer's auxiliary compartment.
- CTs shall be of vacuum impregnated or epoxy encapsulated construction. CTs with compound filing or adjustable primary turns will not be accepted:

3.2 Գործարանային ստուգում:


Նախքան աշխատանքային տեղամաս տեղափոխումը, գործարանում պետք է իրականացվի գործարանային ընդունման թեստավորում (ԳԸԹ)՝ Պատվիրատուի ներկայությամբ (Պատվիրատուն հոգում է իր ներկայացուցչի ծախսերը թեստավորմանը մասնակցելու գործընթացում): Թեստավորման ծավալը ներառում,

3.2 Testing at factory:

Before shipment to the site, in the factory, should be executed Factory acceptance test (FAT), witnessed by the Client. (The client shall cover the costs of his/her representative during the testing process). Scope of the tests should include but not limited to:

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet 7 - 14

<p>բայց չի սահմանափակվում հետևյալով</p> <ul style="list-style-type: none"> - Մեկուսացման թեստավորում; - Տեսազննում; - Ֆունկցիոնալ թեստավորում; <p>Իրականացված թեստի համար պետք է լրացնել երկլեզու արձանագրություն (հայերեն կամ ռուսերեն և անգլերեն):</p> <p>Սարքավորումը չի կարող բաց թողնվել առանց հաստատման, որ ԳԸԹ-ն հաջողությամբ իրականացվել է՝ հաստատված պատվիրատուի ստորագրությամբ:</p> <p>-Արտարողը իր մասնագետներին գործուղում է Սպանդարյան ՀԷԿ շեֆ-մոնտաժային և կարգաբերման աշխատանքներ կատարելու համար:</p>	<ul style="list-style-type: none"> - Insulation tests; - Visual inspection; - Functional tests; <p>For the executed tests, should be filled bilingual protocols (in Armenian and English).</p> <p>The equipment can not be released for shipment without successful completion of the FAT confirmed with the Client's signature for approval.</p> <p>The contractor sends their specialists on a business trip to Spandaryan HPP to carry out installation and adjustment works as installation supervisor.</p>
<p>3.3 Ըստ ներկառուցված գծագրերի և փաստաթղթերի, պիտակավորում և նշագրում:</p> <ul style="list-style-type: none"> - Ներկառուցված գծագրերը, միագծանիսխեմաները թեստավորման արձանագրությունը և Շ և Կ ուղեցույցը առաքված վահանակի հետ մեկտեղ պետք է հանձնվեն Պատվիրատուին: - Բոլոր բաղադրիչներն ու օժանդակ լարերը, որոնք տեղադրված են վահանակում, պետք է համարակալվեն նույն թվերով, որոնք նշված են լարերի սխեմաներում: - Բոլոր սարքերը, կոճակները, բանալիները, մուտքային և սնու-ցող անջատիչները, և այլն պետք է պիտակավորվեն իրենց բաժանմունքի առջևի դռան վրա՝ ունենալով մշտական պիտակ հայերեն, կամ ռուսերեն և անգլերեն լեզուներով: 	<p>3.3 As-Build drawings and documentation, labeling and marking:</p> <ul style="list-style-type: none"> - As-build drawings, single line diagrams, test protocols and O&M manuals should be handed-over to the Client along with the shipped panel; - All components and auxiliary wires installed in the switchboard, should be labeled with the numbers shown on the wiring diagrams; - All gauges, button, switches, feeders and etc. should be labeled on the front door of their compartment with permanent label in Armenian or in English and Russian.
<p>4. Առաքման պայմանները</p> <p>Նոր վահանակի կառուցումը, արտադրումն ու առաքումը, տեղադրումը և կարգաբերումը պետք է իրականացվի պայմանագրի ստորագրման պահից 160 օրվա ընթացքում:</p> <p>4.1 Երաշխիք</p> <p>Երաշխիքային ժամկետը ոչ պակաս քան երեք տարի, տեղա-դրման օրվանից:</p> <p>5. Փաթեթավորում և ուղարկում</p> <p>Վահանակը պետք է փաթեթավորել այնպես, որ այն փոխադր-ման ժամանակ չվնասվի: Կապալառուն պատասխանատվու-թյուն է կրում ապահով բարձման և 6-րդ կետում նշված վայր փոխադրման համար:</p> <p>6. Առաքման վայր</p> <p>Վահանակի առաքման վայրը հետևյալն է.</p> <ul style="list-style-type: none"> - ԲԳՀԿ ընկերության Սպանդարյան ՀԷԿ-ի տարածք, գ. Շաղաթ, Սյունիքի մարզ, Հայաստան: <p>7. Հղումային փաստաթղթեր:</p> <p>Մատակարարվող ապրանքները պետք ուղեկցվեն հետևյալ փաստաթղթերով.</p> <ul style="list-style-type: none"> -Հանձնման – ընդունման արձանագրություն 	<p>4. Terms of the delivery</p> <p>Engineering, manufacturing, testing and delivery of the new switchboard should be completed within 4 (four) months from the date of the contract.</p> <p>4.1 Warranty period - not less than three years from the date of installation.</p> <p>5. Packing and shipment</p> <p>Switchboard should be packed in such way which will protect him from damages during the transportation. Contractor is responsible for the secure uploading and transportation till the place of delivery stated in item 6.</p> <p>6. Place of delivery</p> <p>Place of delivery of the switchboard is the area of Spandaryan HPP of CGHC, village Shaghat, Syunik region, Armenia.</p> <p>7. Referred documents:</p> <p>Supplied goods must be accompanied by the following documents:</p> <ul style="list-style-type: none"> -Delivery - acceptance protocol -Quality & safety certificate issued by the employer

	ContourGlobal Hydro Cascade		Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION		REV. 0 27.02.17
	Տեխնիկական բնութագիր		Վերանայում Sheet Էջ 8 14

<p>-Գործատուի կողմից տրված որակի և անվտանգության սերտիֆիկատ</p> <p>-Երաշխիքային քարտ</p> <p>-Շահագործման և տեխնիկական սպասարկման հրահանգներ</p> <p>-Փորձարկման արձանագրություններ:</p> <p>-Փաթեթավորման թերթ կամ այլ ցուցակ</p>	<p>- Warranty card</p> <p>-Operation and maintenance instructions</p> <p>-Test protocols</p> <p>-Packing sheet or other list</p>
---	--

8.Տեղադրման, մոնտաժման և կարգաբերման աշխատանքներ

8. Installation, mounting and adjustment works

8.1 Կապալառու կազմակերպությունը ծանոթանալով տեխնիկական բնութագրին ներկայացնում է իր մոտեցումները, պատվիրատուին է ներկայացնում աշխատանքների կատարման իր մոտեցումները, որը իր մեջ կներառի աշխատանքների ընդհանուր ծավալը, տեխնիկական լուծումները և անվտանգության միջոցառումները: Պատվիրատուի հետ քննարկումների արդյունքում, կազմում է փաթեթ, որն իր մեջ ներառում է աշխատանքային նախագիծ, ծավալաթերթ և նախահաշիվ համաձայն ՀՀ գործող նորմերի և տեղեկագրերի:

Աշխատանքների իրականացման համար կնքվելիք պայմանագիրը լինելու է «հաստատագրված պայմանագիր»:
Աշխատանքի կատարման ժամանակահատվածը առաջարկում է կապալառու կազմակերպությունը, որը չպետք է գերազանցի 40 օրը:

8.1.1 Մրույթին մասնակցող ընկերությունները գնահատվելու են ըստ հետևյալ չափորոշիչների՝

1. Տեխնիկական առաջարկ – 70%
2. Ֆինանսական առաջարկ – 30%

8.1 After getting acquainted with the above-mentioned report, the Contractor organization shall present to the Client their approaches related to the implementation of works which will include the total volume of works, technical solutions, and safety measures. As a result of discussions with the client organization, a package will be drawn which will include a working design, bill of quantity and estimates in accordance with the RA current norms and references.


The contract to be signed for implementation of the works will be a “Lump Sum Contract”. The period of work execution is proposed by the contractor organization which should not exceed 40 days.

8.1.1 The companies participating in the tender will be evaluated according to the following criteria:


1. Technical proposal - 70%
2. Financial proposal - 30%

Տեխնիկական գնահատումը կիրականացվի ըստ հետևյալ չափորոշիչների և առավելագույն միավորների			
			Միավորներ
1	Ծրագիր և մեթոդներ		50
1.1	Առաջարկի հստակություն և ամբողջականություն	5	
1.2	Աշխատանքների կատարման տեխնիկական առաջարկ	10	
1.3	Առաջարկվող տեխնիկական առաջադրանքի վերլուծություն, դիտողություններ, առաջարկներ	15	
1.4	Աշխատանքների կատարման օրացուցային պլան, մանրամասն նկարագրություններով և առաջադրանքների կատարողներով	10	
1.5	Աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող սարքավորումներ	10	

Technical evaluation will carried out according to the following criteria and maximum points:			
			Scores
1	Program and methods		50
1.1	Clarity and completeness of the proposal	5	
1.2	Technical proposal for works execution	10	
1.3	Comments, proposals and analysis of the suggested technical specification	15	
1.4	Calendar plan for execution of works, with detailed description and task performers	10	

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet Էջ 9 14

2.	Մասնակից կազմակերպության փորձառությունը		50	1.5	Equipment used during execution of works	10	
2.1	Նմանատիպ աշխատանքների փորձառություն	35		2	Experience of the participating		50
2.2	Մասնակից կազմակերպության տվյալ աշխատանքներում ներգրավված առանցքային անձնակազմի պահանջվող չափանիշներին համապատասխան մասնագիտական որակաորում	15		2.1	Experience in similar works	35	
				2.2	Professional qualification in accordance with the required criteria of the Key Personal of the tenderer involved in the given works	15	
Ընդհանուր առավելագույն			100	Total maximum			100
<p>Տեխնիկական գնահատումից հետո բացվում են մասնակից կազմակերպությունների ֆինանսական առաջարկներով փակ ծրարները այլ դեպքում. երբ տվյալ մասնակից կազմակերպության տեխնիկական գնահատման արդյունքը կազմել է 60 և ավել միավոր:</p> <p>Վերջնական գնահատումը կատարվում է հետևյալ սկզբունքով</p> <p>$P_T = 70 * T / T_0$ որտեղ՝</p> <p>P_T - տեխնիկական առաջարկի միավորն է,</p> <p>T - մասնակցի հավաքած միավորները,</p> <p>T_0 - առավելագույն միավորներ հավաքած մասնակցի միավորները:</p> <p>Մասնակից կազմակերպությունների ֆինանսական առաջարկը գնահատվում է հետևյալ սկզբունքով՝</p> <p>$P_F = 30 * C_0 / C$, որտեղ՝</p> <p>P_F – ֆինանսական առաջարկի միավորն է</p> <p>C_0 – կազմակերպությունների կողմից առավելագույն ցածր գնային առաջարկը</p> <p>C – մասնակից կազմակերպության առաջարկած գինը:</p> <p>Ընդհանուր միավորները կհաշվարկվեն հետևյալ կերպ՝</p> <p>$P = P_T + P_F$</p>				<p>After the technical evaluation, closed envelopes with financial proposals of the tenderers are opened if the technical evaluation result of the participant is 60 and more points.</p> <p>The final evaluation is done by the following principle:</p> <p>$P_T = 70 * T / T_0$, where,</p> <p>P_T - Score for technical proposal</p> <p>T - Scores gained by the participant</p> <p>T_0 - Scores of the participant with the maximum number of scores</p> <p>The financial proposal of the tenderers is evaluated by the following principle:</p> <p>$P_F = 30 * C_0 / C$, where</p> <p>P_F - Score for financial proposal</p> <p>C_0 - Lowest bid offered by organizations.</p> <p>C – Price offered by the tenderer</p> <p>The total score will be calculated as follows:</p> <p>$P = P_T + P_F$:</p>			
<p>Ընդհանուր պահանջներ</p> <p>8.2 Աշխատանքները պետք է իրականացնել համաձայն ՀՀ գործող Համապատասխան կանոնների և նորմերի, տեխնիկական, սանիտարական և հակահրդեհային կանոնակարգերի ինչպես նաև Պատվիրատու կազմակերպության ներսում գործող նմանատիպ կարգավորումների:</p> <p>8.3 Աշխատանքները պետք է իրականացնել բարձր որակավորում ունեցող անձնակազմ, որը ցանկալի է ունենա նմանատիպ աշխատանքների իրականացման մեծ փորձառություն:</p> <p>Կապալառուից պահանջվում է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր այն մասին որ վերջին 2 տարում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ 50 մլն. ՀՀ դրամից, որից առնվազը 1 պայմանագրի շրջանակներում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ 20 մլն. ՀՀ դրամից:</p> <p>Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճեններ (պայմանագիր, կատարողական ակտեր, հանձնման և ընդունման ակտ):</p>				<p>General requirements</p> <p>8.2 The works should be carried out in accordance with the applicable regulations and norms of the RA, technical, sanitary and fire-fighting regulations, as well as similar regulations within the Client organization.</p> <p>8.3 The work should be carried out by highly qualified staff, preferably with considerable experience in similar works.</p> <p>The Contractor is required to submit relevant documents stating that the volume of similar works expressed in amount done in the course of the last 2 years is not less than 50 million AMD, out of which the amount of works implemented under one contract is not less than 20 million AMD. In attachment submit copies of relevant documents (Contracts, Performance acts, Acts of acceptance).</p>			

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION	REV. 0 27.02.17 Վերանայում
	Տեխնիկական բնութագիր	Sheet Էջ 10 - 14

8.4 ՀՀ օրենսդրությանը համապատասխան ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և զննման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող բոլոր լիցենզիաները, թույլտվությունները, վկայականները և այլ փաստաթղթեր:

8.4.1 Քաղաքաշինության էներգետիկ ոլորտի լիցենզիա:

8.5 Եթե որոշ աշխատանքներ կատարելու համար Կապալառուն ընդգրկում է ենթակապալառու, բոլոր պահանջները պարտադիր են նաև ենթակապալառուի համար:

8.6 Մրցույթի ընթացքում բոլոր մասնակիցները իրավունք ունեն Պատվիրատուի հետ միասին մտնել տարածք՝ աշխատանքների ծավալները և կատարման վայրը ճշտելու համար:

8.7 Կապալառուն պատասխանատվություն է կրում հետևյալը ապահովելու համար՝

- Իր աշխատողների փոխադրումը
- Արտադրական սանդուղքներ մինչև 2 մ բարձրության
- Բարձրացնող հարմարանքներ, օրինակ՝ տալի (մինչև 3 տ հզորության)
- Բոլոր անհատական և հատուկ գործիքներ, որոնք անհրաժեշտ են նշված աշխատանքները կատարելու համար, բացի Պատվիրատուի կողմից տրամադրվածից:
- Անհատական պաշտպանության միջոցներ իր աշխատողների համար՝ Պատվիրատուի չափանիշներին համապատասխան:
- Բարձրությունների վրա կատարվող աշխատանքների դեպքում ապահովել ներքևում աշխատող կամ գտնվող աշխատակիցների անվտանգությունը:
- Անհրաժեշտ չափիչ գործիքներ
- Բոլոր տեսակի թափոնները տեղափոխել հատուկ հատկացված վայր
- Բոլոր մոնտաժային նյութերը՝ հեղուկ, մանեկ, թափոցակ, մեկուսիչ նյութեր, սոսիրնա և այլն, որոնք թվարկված չեն պատվիրատուի կողմից տրամադրվող նյութերի ցանկում:

8.8 Աշխատաժամանակ

Աշխատանքներից առաջ կապալառուն պետք է ներկայացնի իր աշխատանքների մանրակրկիտ ժամանակացույցը, աշխատանքային ռեսուրսները՝ կանգառի ժամանակահատվածում աշխատանքները ավարտելու համար: Պատվիրատուի նորմալ աշխատանքային օրը ցերեկային հերթափոխն է՝ ժ. 9:00-17:45-ը: Ոչ աշխատանքային ժամերին աշխատանքը թույլ է տրվում միայն Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

8.9 Աշխատատեղի մաքրությունը

Իր աշխատանքները կատարելու ընթացքում Կապալառուն պատասխանատվություն է կրում իր աշխատատեղի լրիվ մաքրման և հավաքման համար:

Սարքավորումները և նյութերը, որոնք չեն օգտագործվում տվյալ պահին պետք է տեղադրված լինեն հատկացված տեղերում: Աշխատանքները կատարելուց հետո տարածքը պետք է մաքրվի, կարգի բերվի և միայն դրանից հետո հանձնվի պատվիրատուին:

8.4 All licenses, permits, certificates and other documents required for the supply of goods, execution of works and provision of services that are subject matter of procurement in accordance with the legislation of the Republic of Armenia

8.4.1 Civil construction license in energy sector

8.5 When contractor has subcontractors for some of the activities, all requirements are also valid for his subcontractors.

8.6 Contractor should take care and prevent damages on the equipment of the Client caused during his activities on the site.

8.7 Contractor is responsible to ensure:

- Transportation of all his employees involved in the activities on the site.
- Industrial step ladder with at least 2m.height.
- Lifting equipment such as hoist for small loads (at least up to 3t.).
- All personal and/or special tools necessary to execute the scope of this works, except the one listed as Client's supply.
- All personal protective equipment for his employees as per the standard of the Client.
- When works at heights, to ensure protection, restriction for the people passing or working in the areas below.
- All necessary measuring tools.
- All waste parts to be disposed at designated areas only.
- All small installation materials like bolt, isolation bands, isolation varnish for the isolation repairs end etc. not listed in the scope of delivery of the Client


8.8 Working time:

Before the start of works, Contractor should present his detailed work schedule and labor resources necessary to complete the scope within the outage period. The normal working time on the site is Day shift, from 8:00 till 17:00. Works, out of the normal working time are allowed only after preliminary agreement with the Client.

8.9 Cleaning the site and house keeping:

During the execution of the works, the Contractor is responsible entirely of the cleaning and housekeeping of the area where he works.

All the equipment and materials which are not currently used, should be arranged in special locations. After the completion of the works, area should be handed over to the Client, clean neat and tidy.

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet էջ 11 - 14

8.10 Տեղում էլեկտրական սնուցում

Աշխատավայրում առկա 220/380Վ, 50 Հց աղբյուրներից էլեկտրականության սնուցում: Կապալառուին պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ երկարացման լարերը, շարժական լուսա-տուները, սնման ժամանակավոր վահանակները և մյուս բո-լոր սարքերը, որոնք պետք է համապատասխանեն արդյուն-նաբերական չափանիշներին՝ տեխնիկական և տեխանվտա-նագության մասով: Բոլոր սնման վահանակները/աղբյուրները պետք է հողանցվեն և պաշտպանված լինեն կարճ միացու-մներից: Արգելվում է օգտագործել անսարք, ինքնաշեն անջա-տիչներ, ապահովիչներ, ջարդված խրոցակներ, վարդակներ և այլն, ինչպես նաև ցանկացած տիպի անսարք/վնասված սարքավորումներ, որոնք կարող են հանգեցնել հոսանքա-հարմանը: Բոլոր ժամանակավոր մալուխները պետք է տե-ղադրել չոր մակերեսներին՝ բացառելով դրանց աշխատանքի ժամանակ վնասելու հնարավորությունը:

9. Տեխանվտանգություն

9.1 Աշխատանքները պետք է կատարվեն տեխանվտանգության ՀՀ նորմատիվ պահանջներին և Պատվիրատուի ընթացակարգերին և չափանիշներին համապատասխան:

Աշխատանքները սկսելուց առաջ Պատվիրատուին կատարում է Կապալառուի և ենթակապալառուի աշխատողների հրա-հանգավորում աշխատանքի անվտանգության և պաշտպա-նության թեմայով: Պետք է գնահատել բոլոր առկա վտանգները և նախաձեռնել միջոցներ վնասվածքները կանխարգելու համար: Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուի բոլոր աշխատողներին պետք է տեղեկացնել տարհանման սխեմայի և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգի մասին: Աշխատանքները սկսելուց առաջ ՔոնթուրԳլոբալի ներկայա-ցուցիչը Կապալառուին տեղեկացնում է՝

- Աշխատատեղի յուրահատուկ վտանգների
- Նույն աշխատավայրում աշխատող այլ կապալառու-ների աշխատանքի արդյունքում առաջացող բոլոր վտանգներ ի մասին

Տեղամասում ցանկացած աշխատանք սկսելուց առաջ կապա-լառուի ներկայացուցիչը պարտավոր է ձեռք բերել աշխատանքի թույլտվություն (կարգագիր) Պատվիրատուի արտադրական ստորաբաժնից:

9.2 Անհատական պաշտպանության միջոցներ (ԱՄՊ)

Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուին պետք է ներ-կայացնի, որ իր բոլոր աշխատողները ապահովված են անհրա-ժեշտ անհատական պաշտպանության միջոցներով՝ համաձայն Պատվիրատուի տեխանվտանգության չափանիշների և ընթա-ցակարգերի:

Արգելվում է

- Օգտագործել անսարք կամ ինքնաշեն գործիքներ կամ ժամկե-տանց գործիքներ կամ սարքեր
- Օգտագործել անսարք կամ ոչ համապատասխան (չափերի) երկարացման լարեր, լուսատուներ, կամ լարում, որոնք չեն համապատասխանում փակ տարածքներում աշխատելու պա-

8.10 Power supply at the site

The available power supply is: 220/380 V 50Hz.

Contractor should provide all needed extension cables, portable lights, temporary power boards and etc. equipment, all as per the industrial standards and without damages or hazards for using. All used power boards should be grounded as a protection against short circuits. It is not allowed to use faulty breakers, self-made fuses, broken plugs and sockets and etc. damaged equipment which can cause electrical shocks. All laid temporary cables should be installed at dry surfaces without possibility to be smashed during the works.

9. Safety:

9.1 Site works must be performed following all Armenian safety regulations and Clients safety procedures and standards.

Before start of the work. Client makes safety induction for all employees of the Contractor and subcontractors. All existing hazards should be assessed and measures should be taken to prevent injuries.

Before the start of the works, every employee of the Contractor should be informed for the evacuation schemes and procedures in case of emergencies.

Before the beginning of the works, CG representative will inform the Contractor for:

- All specific hazards on the jobsite.
- All existing hazards arising from the works of other contractors working at the same time in the area.


Before the beginning of any site activity, the representative of the Contractor should obtain work permit (NARYAD) from the operational staff of the Client.

9.2 Personal Protective equipment (PPE):

Before the start of the works, Contractor should show that all his staff is equipped with the required personal protective equipment as per the safety standards and procedures of the Client.

Forbidden is:

- Usage of faulty or self-made tools or such tools for which any required periodical check is expired;
- Faulty or not correctly sized extension cables, lamps or

	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet to 12 - 14

հանջներին:

9.3 Հակահրդեհային պաշտպանության ընդհանուր կանոն-ներ՝ եռակցման, հղկման և ջերմային այլ աշխատանքների ժամանակ: Բոլոր ջերմային աշխատանքները պետք է կատարել միայն աշխատանքի թույլտվություն/կարգագիր ստանալուց հետո: Կապալառուն պետք է.

- Ջերմային աշխատանքների տեղամասը մաքրի դյուրավառ նյութերից և պահպանի անվտանգության գոտի՝ առնվազն 5մ պարագծով:
- Եթե դյուրավառ նյութերը հնարավոր չէ հեռացնել անվտանգության եզրագծից այն կողմ, Կապալառուն այդ նյութերը պետք է մեկուսացնի հուսալի ցանկապատով:
- Ջերմային աշխատանքների տարածքը ապահովի կրակմարիչներով և անհրաժեշտության դեպքում հակահրդեհային այլ միջոցներով:
- Կրակով աշխատանքներ կատարելու ժամանակ կանխարգի բոցերի, տաք մասնիկների հպումը դյուրավառ նյութերի հետ
- Աշխատանքներն ավարտելուց հետո անպայման անջատի բոլոր սնման աղբյուրները (հղկման, եռակցման):
- Հրդեհի բռնկման դեպքում պետք է անմիջապես դադարեցնի բոլոր աշխատանքները: Անհապաղ տեղեկացնի արտադրական ստորաբաժնի պատասխանատու անձնակազմին և համապատասխան աշխատողները պետք է անմիջապես նախաձեռնեն կրակը մարելու գործողություններ:
- Ջերմային աշխատանքներ կարող են իրականացնել միայն համապատասխան որակավորում ունեցող աշխատողներ:

9.4 Տեղեկատվական փաստաթղթեր

- ԱՊՄ օգտագործման հրահանգ
- “Տեխնիկական կանոնակարգ, էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոններ”՝ հաստատված ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 1933-Ն որոշմամբ:
- ԲԳ տեխնիկականության, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության ընթացակարգեր:

9.5 Ուսուցում

Կապալառուն վարում է դասընթաց «Բաշխիչ սարքավորումների շահագործում և տեխնիկական սպասարկում» թեմայով:

voltage level different from the required for work at confined spaces.

9.3 General rules for fire prevention and firefighting during hot works (grinding, welding):

All hot works can be performed only after obtaining the required work permits.

Contractor should:


- Clean the area of the hot works from flammable material and maintain safety perimeter of at least 5m.:
 - When flammable materials cannot be removed from the safety perimeter, contractor should ensure reliable fences around that materials.
 - Ensure the necessary fire extinguishers and if needed other firefighting equipment near the hot works.
 - Not allow, during the hot works, arcs and/or hot debris to reach flammable materials.
 - After the completion of the works, all power or other supply to the welding or grinding equipment should be unplugged.
 - In case of fire, all works should be immediately stopped. Immediately should be notified the responsible operational staff and firefighting actions started immediately by the involved workers.
- Hot works are allowed to be executed only by qualified workers.

9.4 Reference Documents:

- Instruction for usage of PPE.
- State Regulations on Safe Operation of electrical equipments, systems and facilities, approved by RA Government Resolution №1933-N/2006
- Procedure of ContourGlobal for H&SE:


9.5. Training

The Contractor conducts a training on "Operation of Distribution Equipment - Maintenance".

CONTOURGLOBAL Հիդրո կասկադ 	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet էջ 13 - 14



ՆԿ. 1 ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏ ԲԱԾԵԽԶ ՍԱՐՔԱՎ

CONTOURGLOBAL Հիդրո կասկադ 	ContourGlobal Hydro Cascade	Document no. Փաստաթղթի N
	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր	REV. 0 27.02.17 Վերանայում Sheet էջ 14 - 14



Նկ. 2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅԱՆԱՅԻՆ ԿՈՄՊԼԵԿՏ ԲԱԾԵԽԶ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ